

ԱՆՈՒՇ ԱՊՐԵՍՅԱՆ
*Մենքույ Մաշտոցի անվան Մատենադարան, հայցորդ
An-Apresian@mail.ru*

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ԵՐԿԻ ԱՌԱՋԻՆ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԸ

Հայ մատենագրության մեջ չկա մի երկ, որն այնքան շատ րնդօրինակություններ կամ հրատարակություններ¹ ունենա, որքան «Մատենան ողբերգութեանը»: Ավետարանից և Մաղմուսարանից հետո այն եղել է հայ միջնադարյան գրչաշխարհում ամենատարածված բնագիրը, և բնավ պատահական չէ, որ ԺԴ-ԺԵ դդ. մատենագիր Գրիգոր Խլաթեցին հետևյալ դիտարկումն է անում. «Վայ արեղին, որոյ սա չէ»:

«Մատենան ողբերգութեանը» թարգմանվել է ոչ միայն գրաբարից աշխարհաբար, այլև տարբեր լեզուներով: «Մատենան ողբերգութեանը»-ը աշխարհաբար թարգմանել են Արշակ Չոպանյանը և Միսաք Գոչունյանը, Թորգոմ Գուշակյանն ու Գարեգին Խաչատուրյանը, Մկրտիչ Խերանյանը և Վազգեն Գևորգյանը: Նրանք Գրիգոր Նարեկացու երկը թարգմանում էին այնպես, ինչպես այն հասկանում ու րնկալում էին: «Մատենանի» վաղ սերնդի թարգմանիչները՝ Միսաք Գոչունյանը, Թորգոմ Գուշակյանը, Գարեգին Խաչատուրյանը, լինելով հոգևորականներ, այն թարգմանում էին որպես աղոթագիրք, վերանվանում «Նարեկ աղօթից», «Աղօթամատենան»՝ իրենց թարգմանություններում գրեթե բոլոր արտահայտություններին անվերապահորեն վերագրելով կրոնական իմաստ, դիտելով որպես հոգևոր այս կամ այն խորհրդանիշ: Հաջորդ սերնդի թարգմանիչները՝ Խերանյանը, Գևորգյանը, «Մատենանը» արդեն թարգմանում էին իբրև բանաստեղծական երկ:

Գրիգոր Նարեկացու երկի թարգմանիչների շարքում առանձնանում է Արշակ Չոպանյանը՝ «Մատենանի» առաջին թարգմանիչը. նա այդ երկը թարգմանում էր և՛ որպես աղոթագիրք, և՛ որպես բանաստեղծություն: «Ամբողջ միաստիքականութիւնն է այդ գործը, եւ ամբողջ քնարերգութիւնը»², - գրում է Չոպանյանը: «Աղօթքիդ թելերովն օժանդակէ՛ ինձի, դուն որ ապրողներուն մայրը կը խոստովանուիս, որպէս զի այս աշխարհին հով-

¹ «Մատենանը» տպագրվել է Պոլսում (թվով 32), այնուհետև՝ Վենետիկում (15 տպագիր, որոնցից երկուսը՝ քաղված), Երուսաղեմում (6) և Զմյուռնիայում (3): Մեկական հրատարակություններ են տվել Մարսելը (թերի), Փարիզը, Թիֆլիսը, Բուենոս Այրեսը, Դելմարը և Երևանը (քաղված): **Գրիգոր Նարեկացի**, 1985, 225:

² **Չոպանյան Արշակ**, 1924, Ա:

տէն ելած ատենս՝ առանց տանջանքի երթամ պատրաստուած կեանքին օթեւանը, որպէս զի թերեւնայ ինծի պէս անօրէնութեամբ ծանրաբեռնուածի մը կատարածը... // Հիմա, պիտի ըլլայ որ իմ մարմնիս բազմախորտակ տապանակը նորոգուած տեսնեմ նորէն: Պիտի ըլլայ որ իմ ողբալի հոգիիս փշրուած նաւը ողջնցած տեսնեմ: / Պիտի լսեմ արդեօք որ իմ գութիս ձայնին հետ աւետիքին լուրն ինծի դրկուի: / Պիտի տեսնեմ արդեօք իմ հոգիիս արօտին կանաչնալն անձրեւին ցողումէն»³:

Արշակ Չոպանյանը, 1872 թ. ծնված լինելով Կ. Պոլսում և լինելով Կեդրոնական վարժարանի առաջին շրջանավարտներից մեկը, դեռ աշակերտական տարիներից պոլսահայ մամուլում տպագրել է չափածո երկեր և ֆրանսերենից կատարված թարգմանություններ: 1895 թվականի սկզբից հրատարակել է «Ծաղիկ» գրական հանդեսը, որտեղ ընդգրկել է Գրիգոր Նարեկացու «Մատենից» կատարած իր թարգմանությունները: Մեկ տարի անց մեկնել է Փարիզ, որտեղ 1898 թ. հիմնել է «Անահիտ» ամսագիրը: Այդ պարբերականի էջերում տպագրել է ինքնուրույն և թարգմանական մի շարք երկեր, լույս ընծայել, հմտալից հետազոտություններ հայ գրողների, տաղերգուների, արվեստագետների մասին, որոնք հետագայում ամփոփվել են «Դէմքեր» ժողովածուի երկու հատորներում (Ա. հատ. Փարիզ, 1923, Բ. հատ. 1929)⁴:

Գրիգոր Նարեկացու երկը Չոպանյանը գնահատում էր որպէս հանճարեղ մի ստեղծագործություն. «Գործը, զոր Նարեկացին թողած է, ամբողջ մրրիկ մըն է անհունի մէջ գալարուող զգացման մը, եւ չեմ գիտեր գործ, որ անկից աւելի զօրաւոր ըլլայ: Էջեր կան հոն, ուր մեր բանաստեղծը մարգարէներուն ուժին հաւասարած է, և էջեր, ուր Շեքսպիրի հով մը կ'անցնի»⁵, և թարգմանում էր որպէս աղոթագիրք, քանի որ այն բաղկացած է «աստվածաբանական երկասիրություններից, աղոթքներից, պատմական հատվածներից և կրոնական բանաստեղծություններից»⁶: Նա Գրիգոր Նարեկացու քերթվածքից երկու հատված՝ *Բան ԻՆ և Բան 2*, թարգմանում է աշխարհաբար և հրատարակում:

«Ծովն է ամենէն աւելի նման իմ կեանքիս ծփանքներուն. անթիւ կոհակներու յարձակումներէն հոգիս կը տատանի այս աշխարհիս վրայ, մարմնոյս շինուածքին մէջ ինչպէս նաւակի մէջ: Այս նմանութիւնը զոր Եսայի մարգարէն Երուսաղէմի եւ Սամարիոյ կործանումը նկարագրելու

³ «Ծաղիկ», Փարիզ, 1895, Յաւելուծական թիվ, 123–125: 1895 թ.-ի «Ծաղիկ» հանդեսի մէջ Արշակ Չոպանյանը հրատարակեց շատ արժեքավոր ուսումնասիրություն, որը 1924 թ.-ին ամփոփեց «Դէմքերի» մէջ: Այսուհետև Արշակ Չոպանյանի թարգմանությունից մեջբերվող տողերը կընդգրկենք «Ծաղիկ» հանդեսից առանց տողատակում նշելու, վերևում փակագծերում, նշելով համապատասխան գլուխը և էջը:

⁴ **Ստեփանյան Գառնիկ**, 1990, հ. Գ, 217–218:

⁵ **Չոպանյան Արշակ**, 1924, Ա:

⁶ Նույն տեղում, 9:

համար գործածեց, սխալ չէ կրկնել իմ հոգիիս խորտակումը բացատրելու» (ԻԵ, 122–123) // «Սուրբ Աստուածածին. մարդոցմէ՝ հրեշտակ, մարմնատեսիլ քերոբէ, երկնաւոր արքայուհի, անխառն ինչպէս օդը, մաքուր ինչպէս լոյսը, անշաղախ՝ ինչպէս բարձր արուսեակը, գերազանց քան բնականութիւնն անկոխելի սրբութեանց...» (2, 125):

Չոպանյանը «Մատեանի» բուն աղբյուրը համարում էր Աստվածաշունչը, երբ «Նարեկացիին գործին մէջ երկնցող զգացմանց շղթան ամբողջ, իր բոլոր օղակներովը», գտնում էր Աստուածաշնչի և Ս. Հայրերի երկերի մէջ⁷: («Վասնզի իրօք բարեգութ տէրը լացաւ մարդկութեան իբր օրինակ, թաղուած ազգակցի մը վրայ, լացաւ նաեւ ապականուած Երուսաղէմին եւ մոլեգնած Հուդային վրայ, որոնց երկուքը կորնչեցան այս փճացած նաւուն պէս, իսկ միւսը անդունդին յատակը հասնելէն յետոյ, յոյսին առասանը ձեռքն ունենալով, անքոյթ խաղաղութեան մէջ բարձրացաւ նորէ:/Կ'ապաւինիմ քու սուրբ Հոգիիդ, որ քու Հօրդ հետ քաղցր ձայնով կը պաշտուի, քեզի հետ անմատոյց լոյսի մէջ կը փառատրուի, որով կեանք եւ երանութիւն՝ քաւութեամբ մէկտեղ՝ կը շնորհուի ինձի պէս մեղաւորի մը...») (ԻԵ, 123–124):

Աստիճանաբար անհրաժեշտություն էր առաջանում «Մատեանը» թարգմանել որպէս բանաստեղծություն. էջերը ավելանում էին, զլուխները հաջորդում էին զլուխներին, և այս եղանակը չէր դադարում. նորանոր բառերով, նոր երաժշտությամբ Գրիգոր Նարեկացին հնչեցնում էր իր երգը, իսկ Չոպանյանը թարգմանում էր՝ հավատարիմ մնալով հեղինակի ոգուն, ոճին ու երաժշտականությանը. «Թիերուն ձեռնարկութիւնը քայքայուեցաւ, բարձր կայմն իր տեղէն խլուեցաւ, առագաստին թռչարանը անկարկատելի ծուէններով պատռուեցաւ, շինուածքին շքեղութիւնը անզարդացաւ, ձգողական չուանները խզուեցան, դիտարանին զլուխը խոնարհեցաւ, ապաւանդակին պարանը կտրեցաւ, խարսխին ապաւինութիւնը լուծուեցաւ...» (ԻԵ, 123):

Եվ ահա Չոպանյանը Գրիգոր Նարեկացուն ազատագրում է «աղօթք գրողի կրօնական գոյնէն ուր սահմանափակուած էր», զգում է, որ «Մատեանի» «կրօնական քօղի տակ արտացոլուած է բանաստեղծի հառաչանքն ու տառապանքը, կեանքի ծարավն ու բարոյական կատարելութեան իղձը», տեսնում է, որ միստիկական շղարշի մէջ ներփակված հոգին «մեր ցեղին հոգին իսկ է», և անկեղծ համոզմունքով պահանջում, որ նրան «դնենք գրական մեծ հանճարներուն շարքը», «ալ չըսենք, որ մեր բանաստեղծութիւնը հսկայ չունի»⁸: Գրիգոր Նարեկացու արտահայտման ձևը համարելով քնարերգականը՝ Չոպանյանը նկատում է, որ «այդ զիրքը հեղինակին հոգիին ամենէն ճշմարիտ արտահայտութիւնն է, ճիշտ անո՛ր

⁷ Նույն տեղում, 19:

⁸ Չոպանյան Արշակ. 1924, 27:

համար որ ամենէն քիչ աստուածաբանականը եւ ամենէն շատ քնարերգականն է իր ամբողջ գործին մէջ»⁹ : Եվ այդպէս էլ թարգմանում է՝ իբրև միստիկ բանաստեղծի հանճարեղ պոռթկում:

«Արցունքներովդ օգնէ ինծի պէս վտանգուածի մը, կիներուն մէջ զովու ծ, ծունկի եկուր՝ զիս հաշտեցնելու համար, ծնող Աստուծոյ, հոգա՛ զիս որ վախէս ետ քաշուեր եմ, բարձրեալին խորա՛ն. ձեռք տուր՝ ինծի պէս ինկածի մը, երկնային տաճա՛ր: Քեզմով որդիդ փառաւորէ՛ ինծի քաւութիւն եւ ողորմութիւն հրաշագործելով, Աստուծոյ մա՛յր եւ աղախին, քու պատիւդ թող ինձմով բարձրանայ եւ փրկութիւնս քեզմով երեւայ» (2, 125) // «Եւ ես անկորուստ աւանդի մը պէս կը պահեմ ճշմարիտ յիշատակի այդ առհաւատչեան՝ միշտ անեղծ, անճառելի անունովն ահաւոր, հզօր, սուրբ, միայն, եւ անքննելի տէրութեանը քու երբեակ անձնաւորութեանդ՝ որ իսկութեամբ, էութեամբ եւ յարակալ բարձրութեամբ, քաղցրութեամբ, ողորմութեամբ, եւ մարդասիրութեամբ պսակուած ու հանդերձուած՝ կը թագաւորես» (ԲԵ, 124):

Գրիգոր Նարեկացին գրեթէ միշտ նախընտրում է ներքոյի քնարերգական ձևը. «Փոխանակ մարդկային պատմութեան մէջ փնտռելու Աստուծոյ մեծութեան փաստերը, իր հոգիին, իր երեւակայութեան մէջ կը փնտռէ զօրութեան բոլոր այն ստորագելիները զոր կրնայ վերնագրել Անոր,– գրում է Չոպանյանը,– եւ այդպէս, իր երգը, յաճախ՝ երկայն թուում մը ածականներու կամ փառաբանող նախադասութիւններու, աստուածա-շնչական օրհներգութեան կամ նախնական բանաստեղծութեանց զովաբանական աղօթքի ձեւը կ'առնէ»¹⁰ : («Երանաւոր խոստումին տէ դր, շնչական Եդեմ, անմահ կեանքին ծա՛ռ՝ բոցեղէն սրովը շրջապատուած, բարձրեալ Հօրմէն զօրացած ու հովանացած, Հոգւոյն հանգստեամբ հանդերձուած եւ մաքրագործուած, Որդւոյն բնակութեամբն յարդարուած եւ տաղաւարուած, անոր որ Հօրը միածինն եւ քու անդրանիկդ է, ծնունդով որդիդ եւ տէրդ արարչութեամբ. անաղտ մաքրութեանդ հետ՝ անբիժ ու բարի, անարատ սրբութեանդ հետ՝ խնամակալ ու բարեխօս, բնդունէ՛ քեզ դաւանողին այս աղերսանքն, ու ասոր խառնելով իմ նախկին ներքոյիս խօսքերը, մատու՛ քու պաղատանքներուդ մէջ. Հիւսէ՛ միացու՛ր իմ մեղաւորի դառն հեծութիւնս քու երջանիկ եւ խնկաւորուած հայցուածներուդ, ո՛վ տունկ օրհնուած կեանքի պտուղին, որպէս զի քենէ միշտ օգնուած ու բարեգործուած, եւ քու մաքրական ծնելութեանդ ապաւինած եւ անով լուսաւորուած, ապրիմ՝ քու տիրոջդ ու տղուդ Քրիստոսին համար») (2, 125):

Բառերի առատությունը, երկարածավալ ու մանվածապատ պարբերությունները և հատկապէս բառերի շարակարգության միջոցով երաժշտականության ջանքերը համարվում են Գրիգոր Նարեկացու գործի մեջ

⁹ Նույն տեղում, 10:

¹⁰ Չոպանյան Արշակ, 1924, 12:

տիրողը, գլխավորն ու մշտականը: «Բառերու ներդաշնակ հաջորդությունը և նախադասությանց կոր զծերով իրարու վրա լայն թավալում մը, հին հայերեն լեզվին սեփական հատկություն մըն է և արդեն կերևա ոսկեդարու ոճին մեջ, այն տարբերությամբ որ Նարեկացիին մեջ կորերը ավելի երկայն են ու բազմոլոր շաղապատումներով իրարու կհյուսվին»¹¹, – գրում է Չոպանյանը:

Ըստ թարգմանչի՝ երաժշտականության հասնելու համար Գրիգոր Նարեկացին գործածում է տառակրկնությունը (allite ration) և վերջակրկնությունը (քաֆիե), սակայն սրանք չեն կազմում բանաստեղծի ոճի բուն նկարագիրը: Գրիգոր Նարեկացու ոճին բնորոշ է կրկնության այն եղանակը, որ նույն զաղափարը տարբեր պատկերներով է վերարտահայտում. «Կզգաք, որ բանաստեղծը այնչափ լեցված, ողողված է իր զաղափարով, որ չի գոհանար անոր մեկ խոսքով արտահայտությամբ՝ նույնիսկ երբ այդ խոսքը ամենեն ուժովն է, և իր զգացումը ամբողջ բացատրելու անհագ բաղձանքով մը, իր կանգ առած ու ծայրահեղորեն ձգված մտքեն կքաշե կհանե բացատրությանց անհուն համրիչ մը, որուն հատիկները, իրարմե ավելի կուռ ու սեղմ, նույն զաղափարը կխտացնեն միշտ»¹²: Հավատարիմ մնալով Գրիգոր Նարեկացուն՝ այդպես էլ թարգմանում է Չոպանյանը:

Գրիգոր Նարեկացու ոճի մյուս հատկանիշն էլ պարբերության կշռույթն է: «Համաչափ կտրատում մըն է նախադասությանց, որոնք համանման ելևեջով իրարու կհաջորդեն. և այդ կշռությունը կերևա ճիշտ իր թվումներուն հետ, երբ անոնք կտրուկ նախադասություններ են երեք-չորս բառով, կշռությունը կարճ և հատկապես է»¹³, – գրում է Չոպանյանը: («Եթե զիս գտնես, տիրամա յր, եթե ինձի ողորմիս՝ սրբուհի՛, եթե շահիս զիս որ կորսուած եմ՝ անարա տ, եթե ինձի պէս անհամարձակ մը հոգաս՝ երջանի կ, եթե առաջ քաշես զիս որ ամօթէս կապուած եմ՝ բարեշնո րհ...») (2, 125–126):

Չոպանյանի համար Գրիգոր Նարեկացու լեզուն հրաշալի կերպով սրված է, ճկուն ու մանրարվեստ. «Նարեկացիին մեջ հայերենը կերպարանափոխ եղած է. քերականական կազմուածքը՝ ներշնչման սանձարձակութեամբը՝ շատ անգամ ծայրայեղ անկանոնութեամբ մը կը խառնաշփոթուի, երբեմն պարբերութիւններ ամբողջ՝ առանց կապի՝ օղին մեջ առկախ թողլով... Իր անհուն զգայնութիւնը բացատրելու համար, չեն բաւած հայերեն լեզուի բոլոր բառերը՝ զոր գիտէ, եւ նորեր դարբնած է, արտակարգ հանդգնութեամբ մը բարդութեանց, բառեր որոնք յաճախ սքանչելի կերպով խտացած զգայնութիւններ են»¹⁴:

¹¹ Չոպանյան Արշակ, 1966, 294:

¹² Չոպանյան Արշակ, 1966, 296:

¹³ Նույն տեղում, 297:

¹⁴ Չոպանյան Արշակ, 1924, 24–25:

Այսպիսով, Գրիգոր Նարեկացուն «Աստված տեսած», «հրեշտակական», իսկ նրա գործը «Նարեկը»՝ «հրաշքի աղբիւր մը դարձած, «հայ» աղօթքին նուիրական գիրքը»¹⁵, համարող թարգմանիչը ոչ միայն առաջինը աշխարհաբար թարգմանեց «Նարեկը», այլն առաջինը Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունը ծանոթացրեց ֆրանսիական հասարակությանը¹⁶: Ֆրանսիայի գրական շրջանները նրա շնորհիվ առաջին անգամ մոտիկից ծանոթացան բանաստեղծ Գրիգոր Նարեկացուն, որի արվեստի մասին հետազայում իրենց սրտի խոսքն ու խոր հիացմունքն արտահայտեցին նշանավոր գրողներն ու քննադատները¹⁷:

Անժիտելի է այն մեծ ավանդը, որ ունեցավ Չոպանյանը նարեկացիագիտության մեջ, սակայն նրա թարգմանությունները կազմում էին «Մատենի» մի մասը, այնինչ անհրաժեշտություն էր առաջանում թարգմանել այդ երկն ամբողջությամբ: Եվ ահա «Մատենան ողբերգութեան» երկն առաջինը ամբողջությամբ թարգմանում է Միսաք Գոչունյանը (Քասիմ): Նա շնորհալի գրող էր, հրապարակախոս, խմբագիր, որը ծնվել էր Հալեպում 1863-ին: Նախնական կրթությունն ստացել էր Կյուրինի ազգային վարժարանում, ապա սովորել Այնթապի Կիլիկյան վարժարանում: 1877 թվականին ավարտելով այն զբաղվել է ուսուցչությամբ: 1886-ին վերջնականապես հաստատվել է Կ. Պոլսում: Գրական ասպարեզ է մտել 1880-ականների սկզբներից: 1891-ից «Մանգումեի էֆքյար» («Մտածմունքների շարք») լրագրի խմբագիրն էր, այնուհետև՝ հրատարակիչ-խմբագիրը, իսկ 1900-ականների սկզբներից «Մանգումեի էֆքյար» թերթը հանձնվել է նրան: Այստեղ 1902 թ. Միսաք Գոչունյանը լույս բնծայեց Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան» երկի արևմտահայերեն իր թարգմանությունը¹⁸:

Գոչունյանի համար Գրիգոր Նարեկացին գրական անհագնություն ունի. միևնույն պարբերության մեջ կողք կողքի շարում է բառի բազմաթիվ հոմանիշներն ու ածականները՝ քսանը, երեսունը՝ իրար ետևից դասելով: («Եւ որովհետեւ դառնութիւններու ամէնէն ծայրայեղը կրեցի, տանջանք, թշնամութիւն, տխրութիւն, հոգեկան վիշտ, անբուժելի ցաւ, յուսահատեցնող տարակոյս, չպարտկուելիք ամօթ, չծածկուելիք խայտառակութիւն, անհամարձակելի պատկառանք, անդառնալի փախուստ, անգութ հալածանք և առանց պաշարի երկար ուղեւորութիւն. Դուն, ո՞վ երկինքն ու երկիրը ստեղծող կենդանի Աստուծոյ որդին Յիսուս Քրիստոս, որ փրկու-

¹⁵ Նույն տեղում, 6:

¹⁶ Արշակ Չոպանյանը 1900 թվականին Ֆրանսիայի գրական հանդեսներից մեկում՝ «Mercure de France»-ում հրատարակեց երեսունվեց էջանոց մի ուսումնասիրություն, որտեղ անդրադարձավ Գրիգոր Նարեկացու աշխարհայացքին, արվեստի առանձնահատկություններին և թարգմանաբար ներկայացրեց հատվածներ «Ողբերգութեան մատենանից»:

¹⁷ «Մովեւտական գրականություն», 1966, 6, 145-146:

¹⁸ Մտեփայան Գառնիկ, 1973, հ. Ա, 251:

թին, զօրութիւն, օգնութիւն, ողորմութիւն, լուսաւորութիւն, քաւութիւն և անմահութիւն ես, որ ծարաւէ պապականոյններուն ջուր կը հայթայթես անպատին մէջ, որ օրինուած, բարեգութ, զօրաւոր, մարդասէր, համբերող, խնամող, հնարագէտ, այցելող, աննախանձ պաշտպան, յաղթող պահապան, չկորսուող կեանք, երկնային միջնորդ, կատարեալ ամբողջութիւն ու հռչակ-ուտելիք երանութիւն ես, սիրով երկնցո՛ւր ինձ ողորմող Աջո՛ւ...»¹⁹ // «Իբր անշարժ տախտակ, կիսայրեաց կոճղ, անզգայ արձան, անխօս պատկեր, անշունչ գոյութիւն, ողորմելի տեսարան, լալիք կերպարան, ողբալի օրինակ, եղկելի դէմք, արտասուելի նմանութիւն, լռած լեզու, ցամքած խոտ, թափուած ծաղիկ, ծիրած գեղեցկութիւն, մարած դամբար (լամպա), պարապ կոկորդ, խոպան սիրտ, կղպուած լեզու, ցամքած աղբիւր, թալկացած մարմին, լուծուած փոք, քակտուած տաղաւար, կոտրուած ուտեր, բաժնուած յօդեր, կտրուած ծառ, սղոցուած արմատ, լքուած տուն, հնձուած արտ, արմատէն կտրուած բոյս, օտարացած բարեկամ, մոռացուած պահեստ, թաղուած աղտեղութիւն, մերժուած ատելի, վերցուած խոչընդոտ, անարգուած կմախք ու իբր ոտնակոխ եղած անպիտան») (ՀԳ, Բ, 357):

Գրաբարում այդքան հոմանիշները քաղցր էին հնչում, բայց աշխարհաբարում դժվար էր այդքան հոմանիշներ գտնելը: («Ո՛վ Ամենակալ, Բարերար, Մարդասէր Աստուածը ամենուն, երեւցածներն ու չերեւցածները Ստեղծող, Փրկող և Հաստատող, Խնամող և Խաղաղարար, ո՛վ Հօր զօրաւոր Հոգին, Ահաւոր ատեանդ ելլելով, հեծեճանքի ձայնով կը խնդրե՛նք, կը մաղթենք բազկատարած») (ԼԴ, Դ, 174):

Ավելի դժվար է այն պարբերությունների թարգմանությունները, որ ծայրեծայր Ս. Գրքի այս կամ այն ասածների և դեպքերի ակնարկություններն են, որը Գրիգոր Նարեկացին այնչափ զգացումով ու հուզումով է գրում, որ ներշնչման հորդառատության մէջ բառերն ու գաղափարները իրար են խառնվում: Հմուտ ընթերցողը հասկանում է գրվածքի միտքը, բայց այդ ամենը նույն բառերով մաքուր աշխարհաբարի վերածելը դժվար է թարգմանչի համար: Այստեղ էր, որ միջնադարյան մեկնությունները, ապա դրանց տվյալներն ընդգրկող Հակոբ Նալբանի և Գաբրիել Ավետիքյանի աշխատությունները մեծապես օգնում էին թարգմանչին թափանցելու «Նարեկի» խորհրդանշային աշխարհը: («Ո՛վ բարերար և ամենքն ունեցող յաւիտենական Աստուած, լոյսն ստեղծող ու գիշերը յօրինո՛ղ, մահուան մէջ կեանք և մութի մէջ լոյս, ակնկալողներուն լոյսն ու շուարածներու համբերութիւնն ես, որ Քու ամէն բան հնարաւորող իմաստութեամբդ մահուան ստուերները՝ արշալոյսի կը փոխես. ո՛վ անհատնում ճառագայթ և չխաւարող արեւ, գիշերուան մութը չկրնար ծածկել Քու տէրութեանդ փառքը...») (ԴԴ, 502):

¹⁹ Գոչունյան Միսաք, 1902, 114–115:

«Մատեան ողբերգութեան» գրված է հիմնականում հին հայկական բանաստեղծությանը հատուկ անհանգ ոտանավորով, սակայն տեղ-տեղ նկատվում են նաև հանգավորման առանձին արտահայտություններ, իսկ մի ամբողջ գլխի մասին (ԻԶ) հեղինակը նշում է, որ խոսքը «կրկնակի ողորմ ու սրտաճմլիկ» դարձնելու համար, հետևելով «լալկան բանաստեղծություն հորինողների» օրինակին, հանգավորել է «տներն ավարտելով միննույն գրով»՝ ի ձայնավորով²⁰:

Միսաք Գոչունյանը «Մատեան» թարգմանել է արձակ և հարազատ է մնացել հեղինակի հանգավորմանը:

Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունը աչքի է ընկնում բանաստեղծական արվեստի բազմերանգությամբ և ոճական ձևերի ու հնարքների բազմազանությամբ: Հեղինակի նախասիրած ոճական միջոցներից են իր տարերքին չափազանց հարազատ համանիշային ու հոմանիշային անսովոր հեղեղումները, կուտակումները, ոչ միայն բառերի, այլև կապակցությունների, նախադասությունների: «Մատեան ողբերգութեան» երկի մեծ մասը կազմում են այդպիսի կուտակումներից բաղկացած դրվագները, որոնք ամենևին էլ չեն ստեղծում միօրինակություն, քանի որ միմյանցից որոշակիորեն տարբերվում են ոչ միայն բաղադրիչ փոփոխական-դամների կառուցվածքով, ծավալով, այլև բնույթով (լինում են և՛ կոչական, և՛ բացականչական, և՛ հաստատական, և՛ ժխտական, արգելական՝ սրանց ամենատարատեսակ արտահայտություններով): Ահա դրվագների մի մասն ինքնին ունի բաղադրիչ կապակցությունների կամ նախադասությունների համանման հավասարանդամ կառուցվածք, անդամների միակերպ դասավորությամբ, նույնական հնչեղությամբ ու շեշտով, որոնք հաճախ նաև սկսվում են միննույն բառով և ավարտվում նույն քերականական ձևին հատուկ վերջավորությամբ²¹:

Թարգմանիչն այս հարցում ևս անվերապահորեն հավատարիմ է մնում բնագրի ձևին: Ահա մեկ հատված նրա թարգմանությամբ.

«Մի՛ դատապարտեր՝ որ պատժուած եմ, մի՛ տանջեր՝ որ չարչարուած եմ, մի՛ ծեծեր՝ որ հարուածուած եմ, մի՛ գլորեր՝ որ ինկած եմ, մի՛ կործաներ՝ որ գայթակղած եմ, մի՛ մերժեր՝ որ հեռացած եմ, մի՛ աքսորեր՝ որ հալածուած եմ (սատանայէն), մի՛ ամչցներ՝ որ խայտառակուած եմ, մի՛ յանդիմաներ՝ որ խրտչած եմ...» (Գոչունյան, 76)

Անհամար են Գրիգոր Նարեկացու երկի թարգմանության հետ կապված հարցերը: Մենք փորձեցինք ցույց տալ «Նարեկի» առաջին թարգմանիչների կատարած դժվարին ու կարևոր աշխատանքը:

«Այո, ամենուն համար, ամեն բանով, ամեն բանի մեջ, կարող ես, գթած, եւ քեզի կր վայլէ փառքը այս կեանքին մեջ եւ հանդերձուած

²⁰ Գրիգոր Նարեկացի, 1979, 637–638:

²¹ Գրիգոր Նարեկացի, 1979, 641–642:

մշտնջենաւորութեան յայտնութեան մեծ օրը, յաւիտեանս, ամէն»։ (Չոպանյան, ԻԵ, 124)

«Ա՛յո, ասոնց ամէնուն ամէն կերպով ու ամէն բանի մէջ կարող ես ո՛վ գրած. եւ Քեզ կը վայելէ փառքը այս աշխարհիս մէջ, ինչպէս նաև այն մեծ աւուր մէջ որ մշտնջենական ու յաւիտենական է և զալիք աշխարհին մէջ պիտի յայտնուի. Ամէն»։ (Գոչունյան, ԻԵ, 122)

Այսպիսով, Արշակ Չոպանյանը առաջինը աշխարհաբար թարգմանեց Գրիգոր Նարեկացու երկից հատվածներ։ Թարգմանեց այն ոչ միայն որպէս աղոթագիրք՝ հավատարիմ մնալով բնագրի բովանդակությանը, այլև՝ որպէս բանաստեղծություն՝ հավատարիմ մնալով նաև արտահայտման միջոցներին, եղանակին, ոգուն ու շնչին։ Լինելով բանաստեղծ՝ Չոպանյանը թարգմանեց բանաստեղծի, զգաց բար, բառերի աշխարհը՝ իր թարգմանությունը դարձնելով պոեզիայի արդյունք։

Միսաք Գոչունյանը առաջինը մեզ ներկայացրեց Գրիգոր Նարեկացու երկը՝ ամբողջական թարգմանությամբ, որի նպատակը, ինչպէս ինքն է գրում. «Աշխարհաբար Նարեկը ձեռքս բռնած՝ աստուածաբանական կաճառի մը առջեւ մրցումի ելլել չէր. ես կը փափաքէի՝ Ս. Գրիգոր Նարեկացիի այնչափ հռչակուած Աղօթագիրքը, ժողովուրդին ամէն դասակարգին մատչելի լեզուով մը թարգմանել»²²։

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գրիգոր Նարեկացի, – Մատյան ողբերգության. Տաղեր, թարգմանություն՝ Վազգեն Գևորգյանի, Երևան, 1979:

Գրիգոր Նարեկացի, – Մատեան ողբերգութեան, աշխատասիրությամբ՝ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի, Երևան, 1985:

Գոչունյան Միսաք, – Աշխարհաբար Նարեկ, Կ. Պոլիս, 1902:

Հորոյ, Նարեկը եւ իւր աշխարհաբար թարգմանութիւնը, Կ. Պոլիս, 1905:

Միսաք Գոչունյան, – Աշխարհաբար Նարեկ, Կ. Պոլիս, 1902:

Չոպանյան Արշակ, – Դէմքեր, Փարիզ, 1924:

Չոպանյան Արշակ, – Երկեր, Երևան, 1966:

«Մովետական գրականություն», համար 6, Երևան, 1966:

Ստեփանյան Գառնիկ, – Կենսագրական բառարան, հ. Ա, Երևան, 1973:

Ստեփանյան Գառնիկ, – Կենսագրական բառարան, հ. Գ, Երևան, 1990:

«Ծաղիկ», Փարիզ, 1895, Յաւելուծական թիվ, էջ 123–125:

²² Գոչունյան Միսաք, 1902, 510:

ANUSH APRESIAN
*Post-graduate Student,
The Mesrop Mashtots Institute of
Ancient Manuscripts –Matenadaran
An-Apresian@mail.ru*

THE FIRST TRANSLATORS OF GRIGOR NAREKATSI'S “THE BOOK OF LAMENTATIONS”

SAMMURY

In Armenian literature no composition has been translated as much as “The Book of Lamentations”. It has been translated not only from Old Armenian into New Armenian but also into different languages. And it has more than one translation in each language and will yet have many translations. Grigor Narekatsi is such a great figure that no one can understand him as he is and no one can create a perfect translation. All the translators were eager to be perfect but no one reached perfection. The only one who was perfect was Grigor Narekatsi. The old generation of the “Book of Lamentations” translators translated this work as a prayer-book, thus giving to all the expressions a religious sense, viewing them as a kind of spiritual symbol. The translators of the next generation translated The Book as a poetic composition.

However from many translations of The Book we should distinguish the first translator of it - Arshak Chopanyan. He translated the composition not only as a prayer book, remaining faithful to the original content but he translated it also as a poem remaining faithful to expressive means, etc.

Being a poet Chopanyan translated the work, filled the word, the world of words making his translation as a result of poetry, as a translation which is deprived of poeticism, is deprived of life. Arshak Chopanyan was not only the first person who translated the work of Narekatsi, but he was also the first who introduced this work to the French community. However, Chopanyan's translations formed one part of work. Nevertheless it was necessary to translate the whole composition. And so the composition “The Book of Lamentations” was wholly translated by Misak Gochunyan whose aim was to translate “Narek” into a new language clearly.

In 1902 in Polse Misak Gochunyan illuminated Grigor Narekatsi's “The Book of Lamentations” in Western New Armenian. Translating this work and realizing the holly work to serve Armenian people both Arshak Chopanyan and Misak Gochunyan and other translators as well, immortalized their names.

АНУШ АПРЕСЯН
Матенадаран имени Месропа Маиштоца,
соискатель,
An-Apresian@mail.ru

ПЕРВЫЕ ПЕРЕВОДЧИКИ “КНИГИ СКОРБНЫХ ПЕСНОПЕНИЙ” ГРИГОРА НАРЕКАЦИ

РЕЗЮМЕ

“Книга скорбных песнопений” превосходит по числу переводов все другие произведения армянской литературы. Произведение Григора Нарекаци было переведено с древнеармянского не только на современный армянский, но и на многие другие языки. Стремление к совершенству присутствовало у всех переводчиков.

Переводчики “Книги скорбных песнопений” раннего поколения переводили произведение Григора Нарекаци как молитвенник, в своих переводах приписывая практически всем выражениям религиозный смысл, рассматривая последовательное истолкование религиозных символов. Переводчики следующего поколения переводили “Книгу” как поэтическое произведение.

Однако в плеяде переводчиков произведения Григора Нарекаци выделяется прежде всего Аршак Чопанян. Он первым перевел отрывки из “Книги скорбных песнопений”. Оставаясь верным содержанию сочинения, Аршак Чопанян переводил фрагменты не просто как молитвенные обращения к Богу, но в стихотворной форме, оставаясь верным средствам выражения, духу и настроению книги. Будучи поэтом, Аршак Чопанян перевел поэта, почувствовал слово, мир слов, превращая свой перевод в результат поэзии, так как перевод, лишенный поэтичности, лишен жизни. Аршак Чопанян не только первым перевел “Нарек” на современный армянский язык, но и первым познакомил с произведением Григора Нарекаци французов. Однако переводы Аршака Чопаняна составляли лишь часть “Книги”, в то время, как уже назрела необходимость перевести произведение полностью. Первым взялся за перевод всего сочинения Мисак Гочунян, целью которого было представить книгу Григора Нарекаци на доступном всем читателям языке. В 1902 г. в Константинополе Мисак Гочунян издает свой перевод “Книги скорбных песнопений” Григора Нарекаци на западноармянском языке.

Так, осуществив перевод бессмертного сочинения Григора Нарекаци, Аршак Чопанян, Мисак Гочунян и другие вписали свои имена в историю армянской литературы.